«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2019-2020 ուս.տարում քոլեջի ուսումնական մասը կատարել է առկա ուսուցմամբ կրթական ծրագրերին ու պլաններին համապատասխան գործընթացներ:

Ժամանակին պատրաստվել են ուսանողների ցուցակները, ուսումնական մատյանները, դասաբաշխման, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալի, օրացույցային-թեմատիկ պլանների և այլ ձևաթղթերը:

2019-2020 ուսումնական տարում կազմվել և ժամանակին պատրաստվել են բոլոր մասնագիտությունների դասացուցակները, միջանկյալ ստուգարքների, քննությունների, առարկայական (մոդուլային) պարտքերի մարման և երկու կիսամյակների ուսումնական ժամանակացույցները:

Կիսամյակների սկզբում կազմվել են բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, ուսումնական խմբերը:

Հիմնական ընդհանուր կրթություն I կուրս-101,102 խումբ
«Դեղագործություն»- II կուրս Ա և Բ խմբեր, III կուրս Ա և Բ խմբեր
«Ատամնատեխնիկական գործ» II կուրս, III կուրս
«Քույրական գործ» III կուրս
«Քույրական գործ» IV կուրս
2019-2020 ուսումնական տարում քոլեջում տարեսկզբին սովորել է 146 ուսանող:

Քոլեջից հեռացվել են 5 ուսանող անհարգելի բացակայությունների և առարկայական պարտքերի պատճառով:

11 ուսանող ազատվել են ուսանողական իրավունքից համաձայն իրենց դիմումների:

1 ուսանող պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած վերականգնվել է:

Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման հանգամանքից ելնելով, ՀՀ կառավարությունը 16.03.2020թ-ի N 298-Ն որոշմամբ հայտարարել էր արտակարգ դրություն: Քոլեջը անցնում է հեռավար ուսուցման: Ուսումնական մասի կողմից կազմակերպվեցին առցանց

հանդիպումներ ուսանողների, ամբիոնի վարիչների և դասախոսների հետ՝ հստակեցնելու առաջիկա անելիքները, որոշելու առցանց եղանակով իրականացնելու հեռավար ուսուցումը, միաժամանակ դասախոսական կազմին և ուսանողներին հասանելի դարձնելու առցանց ծրագրերը, ուղեցույցները, որոնք ներկայացնում են, թե ինչպես կարելի է ուսուցումն իրականացնել առցանց ծրագրերի միջոցով, ինչպես նաև ով ինչ խնդիր ունի հեռավար ուսուցման հետ կապված՝ համացանցի, կապի, տեխնիկական և այլն: Հիմնականում նույն դասացուցակն է, որը հաստատվել էր կիսամյակի սկզբում:

Հեռավար ուսուցման ընթացքում ամենատարբեր հարցերով ամենօրյա կապ է պահպանվել ուսանողների և դասախոսների հետ:

Ուսանողներին նախօրոք ներկայացվել է ավարտական ամփոփիչ ատեստավորումների անցկացման ընթացքը, պայմանավորված նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման հանգամանքից ներկայացվեց նոր կարգը,կատարվեց ամփոփիչ գիտելիքների ստուգում:

Կազմակերպվել է շրջանավարտների դիպլոմների և նրանց ներդիրների տպագրման աշխատանքները և դիպլոմների բաշխման մատյանի վարումը:

Հաշվետու տարում քոլեջը ավարտել են ՝

«Դեղագործություն» մասնագիտությամբ 27 շրջանավարտ,

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ 9 շրջանավարտ:

«Քույրական գործ» մասնագիտությամբ 2 շրջանավարտ

Գերազանցությամբ քոլեջն ավարտել են 7 շրջանավարտ:

Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:

Երկու կիսամյակների ընթացքում ուսանողները հանձնել են 209 ստուգարք և 35 քննություն:

Երկու կիսամյակների կտրվածքով ընդհանուր առաջադիմությունը կազմել է 98%:

Հաշվետու տարում կազմակերպվել և կատարվել է պրակտիկաների անցկացումը:

Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան